Ա. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

ՀԱՅԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ 1828—1829 ԹԹ. ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏՈՒՄ

Հեռավոր անցյալից են գալիս հայ և ռուս ժողովուրդների ռազմական կապերը։ Այդ կապերն ավելի քան ծավալվեցին և խորացան XIX դարի առաջին երեք տասնամյակներում տեղի ունեցած ռուս-պարսկական և ռուս-թուրքական պատերազմների ժամանակ։

Ազնվականական-բուրժուական պատմաբաններ Ն. Դուբրովինը, Վ. Պոտտոն, Ուշակովը, Շչերբատովը, Պ. Զուբովը և ուրիշներ[1] *իրենց աշխատություններում նկարագրել են ռուս-թուրքական պատերազմում Կովկասյան կորպուսի՝ դեպի Հայաստան կատարած արշավանքները։ Նրանք զգալի քանակությամբ նյութեր են կուտակել ռազմական գործողությունների վերաբերյալ։ Սակայն նրանք անտեսել են, կամ հարևանցիորեն անդրադարձել, այդ պատերազմի կովկասյան ռազմաճակատում հաղթանակի հասնելու գործում կարևոր նշանակություն ունեցող հայ և ռուս ժողովուրդների ռազմական համագործակցությանը՝ հայերի կողմից Կովկասյան կորպուսին ցույց տված ռազմական, նյութական ու բարոյական օգնությանը։*

1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի կովկասյան ռազմաճակատում մղված պատերազմական գործողությունների պատմության հարցին անդրադարձել են նաև արևմտյան պատմաբանները[2]*, որոնք հիմնականում ելակետ ունենալով իրենց կառավարությունների գաղութարարական նպատակները Մերձավոր արևելքում՝ պատերազմի ամբողջ հանցանքը բարդել են Ռուսաստանի վրա։ Նրանցում անտեսվել է այն հանրահայտ ճշմարտությունը, որ Թուրքիայի ամբողջականության պաշտպանի դերում իրենց պետությունների հանդես գալը սոսկ մի քող էր թաքցնելու Մերձավոր արևելքում նրանց տիրապետությունն ամրապնդելու քաղաքականությունը։ Նրանք, ունենալով որոշակի նպատակ, բոլորովին չեն անդրադարձել այդ պատերազմի ժամանակ Թուրքիայի տիրապետության տակ գտնվող հայության հետապնդած նպատակների հարցին։*

---

[1] Дубровин Н., История войны и владычества русских на Кавказе, СПб, 1888, Потто В., Кавказская война в отдельных очерках, эпизодах, легендах и биографиях, Тифлис, 1887, Ушаков, История военных действий в Азиатской Турции в 1828—1829 гг., СПб, 1836, Щербатов, Генерал-фельдмаршал князь Паскевич, его жизнь и деятельность, СПб, 1888; Зубов П., Подвиг русских на Кавказе с 1800 по 1834 годы, СПб, 1836.

[2] La Russie l'Asie mineure ou campagnes du Marechal Paskewitch on 1828—1829. Paris, 1840.

Loarstellung des Russich—Türkischen Krieges 1828 in Europa und Asien, Magdeburg, 1829. Witzleben.

Պատերազմի ժամանակ Կովկասյան հատուկ կորպուսին հայերի կողմից ցույց տրված օգնության հարցին անդրադարձել է հայ ազգվա-կղերական պատմագրության ներկայացուցիչ Ա. Երիցյանը[3]։ Նա բերում է մի շարք փաստեր, որոնք հաստատում են հայերի կողմից ռուսական զորամասերին ցույց տրված օգնությունը։ Սակայն նրա մոտ ավելի շատ շեշտված են էջմիածնի կաթողիկոսությունը, հայ կղերականները, քան ժողովրդական մասսաները։

Պատերազմի ժամանակաշրջանում կովկասյան ռազմաճակատում ծավալված ռազմական գործողությունների ընթացքում ռուսական զորամասերին հայերի կողմից ցույց տրված օգնության հարցերին անդրադարձել է նաև հայ լիբերալ պատմաբան Լեոն[4], որի հետազոտած բազմաթիվ նյութերը խիստ արժեքավոր են հայերի կողմից ռուսական բանակին ցույց տրված օգնության փաստը հաստատելու համար։ Սակայն, երբ նա դիմում է այդ փաստերի մեկնաբանությանը, երբեմն մինչև վերջ հետևողական չի մնում և կարծես ափսոսանքով է խոսում հայերի կողմից ցույց տրվող օգնության մասին, որովհետև այն «արհամարհվում էր ռուս բյուրոկրատիայի կողմից»։ Նա չի կարողանում ըստ արժանվույն գնահատել ռուս և հայ ժողովուրդների ռազմական այն համագործակցությունը, որ փայլուն կերպով դրսևորվեց այդ պատերազմի ժամանակ։

Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանի ռուս և հայ ժողովուրդների ռազմական համագործակցության պատմության մարքսիստական ուսումնասիրության և գնահատման բնագավառում լուրջ աշխատանք կատարեցին սովետահայ պատմաբանները, հրապարակի վրա դնելով մի շարք մենագրություններ[5], բրոշյուրներ և հոդվածներ։

Ռուս և հայ զենքի համագործակցությունը որպես երկու ժողովուրդների դարավոր բարեկամության կարևոր արտահայտություն, ըստ ամենայնի մարքսիստական ուսումնասիրության է ենթարկել պրոֆ. Զ. Դրիգորյանը[6]։ Սակայն, այս բոլորով հանդերձ հայ և ռուս զենքի հեռավոր անցյալից եկող համագործակցության պատմության ասպարեզում դեռ կան ոչ լրիվ ուսումնասիրված էջեր, որոնցից մեկի լուսաբանմանն էլ նվիրվում է այս հոդվածը։

* *
*

Նոր էր ավարտվել 1826—1828 թթ. ռուս-պարսկական պատերազմը, երբ 1828 թ. ապրիլի 14-ին սկսվեց ռուս-թուրքական պատերազմը բալկանյան և կովկասյան ռազմաճակատներով։

Կովկասյան ռազմաճակատում պատերազմական գործողությունները հիմնականում ծավալվեցին Ախալցխայի, Կարսի, Բայազետի, Էրզրումի, Մուշի և

---

3 Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մաս Ա, Թիֆլիս, 1894։

4 Լեո, Հայոց պատմության նորագույն շրջան, մաս 2, Երևան, 1927։

5 Պարսամյան Վ. Ա., Հայաստանի միացումը Ռուսաստանին, Երևան, 1940, Դրիբոյեդովը և հայ-ռուսական հարաբերությունները, Երևան, 1947, Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1958։ Ներսիսյան Մ. Գ., Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1958։ Դրիգորյան Զ. Տ., Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին 19-րդ դարի սկզբին, Մոսկվա, 1959, Հայ և ռուս ժողովուրդների դարավոր բարեկամությունը, Երևան, 1960։

6 Դրիգորյան Զ., Ռուս և հայ ժողովուրդների ռազմական համագործակցությունը 19-րդ դարի սկզբին, Երևան, 1957։

Վանի փաշայությունների տերիտորիաներում, որոնց բնակչության զգալի մասը հայեր էին։ Պատմական Հայաստանի այդ տերիտորիան ուներ կարևոր ռազմաստրատեգիական նշանակություն։ Այն իր բնական ու արհեստական բազմաթիվ ամրություններով թուրքերի համար այնպիսի երկրամաս էր, որ հնարավորություն էր տալիս մոբիլիզացնել մեծ բանակի կենդանի ուժ, կուտակել կենսամթերքի ու կերի հսկայական պաշարներ և, որ կարևորն է, հարձակվող բանակների դեմ ունենալ ամրացված պաշտպանական գիծ։ Պատահական չէր, որ թուրքերը, հաշվի առնելով այդ տերիտորիայի բնական և արհեստական ամրությունները, սուն կարծիքին էին, որ ռուսները որևէ հաջողություն ունենալ չեն կարող։

Հիրավի, այդ ամենը թուրքերի համար առավելություն էր, բայց Արևմտյան Հայաստանում ռուսներն ունեին ավելի առավելություն. նրա բնակչության մեծամասնություն կազմող հայ զանգվածները ջերմ համակրանքով էին լցված դեպի ռուսական բանակը, որի հաղթանակի հետ կապում էին թուրքական լուծը թոթափելու իրենց ակնկալությունները։ «...Մոտիկ լինելով Ռուսաստանին հավատի տեսակետից,—գրում է Ուշակովը,—նրանք (հայերը—Ա. Պ.) մեծ հրճվանքով էին դիմավորում մեր զորքերին»[7]։

Պատերազմի հենց սկզբից ռուսական զորամասերին ռազմական օգնություն ցույց տվեցին նաև արևմտահայերը։ «Պատերազմի սկզբում նրանք,—գրում է պրոֆ. Զ. Գրիգորյանը,—մեծ մասամբ մտնում էին Երևանի մարզից եկած հայկական աշխարհազորային ջոկատների մեջ և ռուս զինվորների հետ սերտ մարտական համագործակցությամբ, մեծագույն քաջությամբ ու անձնազոհությամբ կռվում էին թուրքական բանակների դեմ»[8]։

Հայերի՝ դեպի ռուսներն ունեցած համակրանքի մասին հայտնի էր նաև թուրքական իշխանություններին և հենց այդ պատճառով էլ նրանք սահմանամերձ հայ բնակչությանը քշել էին երկրի խորքը։ Այդ մասին գեներալ Պասկևիչը իր զեկուցագրերից մեկում գրում է. «Ամբողջ այն երկրամասը, որ բնակեցված էր հայերով, այժմ ամբողջովին դատարկված է, որովհետև թուրքական կառավարությունը բոլոր բնակիչներին քշել է հեռավոր խորքերը»[9]։

ՍՍՌՄ պետական կենտրոնական ռազմա-պատմական արխիվում պահպանվող բազմաթիվ փաստաթղթեր վկայում են, որ թուրքերը շատ հայերի քշում էին Անատոլիայի խորքերը՝ վախենալով այն բանից, որ նրանք ռուսական բանակին ցույց կտան այնպիսի սիրալիր վերաբերմունք, ինչպիսին ցույց տվին ռուս-պարսկական պատերազմի ժամանակ[10]։

Կովկասյան կորպուսի հրամանատարությունը, ունենալով ռուս-պարսկական պատերազմի փորձը, 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին ավելի վստահորեն սկսեց հայ և անդրկովկասյան մյուս ժողովուրդներից աշխարհազորային ջոկատների կազմակերպման գործը։ Դա ուներ իր որոշակի պատճառները։ Դեռ շարունակվում էր ռուս-պարսկական պատերազմը, իսկ այդ օրերին թուրքական հրոսակները հաճախակի ասպատա-

---

7 История военных действий в Азиатской Турции в 1828—1829 годах. СПб, 1836, стр. 75.

8 Զ. Գրիգորյան, Ռուս և հայ ժողովուրդների ռազմական համագործակցությունը 19-րդ դարի սկզբին, Երևան, 1957, էջ 172։

9 ЦГВИА, ф. ВУА, д. 4644, лл. 65—66.

10 Նույն տեղում, թ. 5—6։

կում էին Հայաստանի սահմանները։ Անհրաժեշտ էին ուժեր՝ սահմանային ծառայության համար։ Պակաս նշանակություն չունեցավ նաև Թուրքիայի կողմից Ռուսաստանի դեմ պատերազմի նախապատրաստվելը, որն արագացնում էին արևմտա-եվրոպական պետությունները։ Թուրքիան այդ ժամանակ կովկասյան ճակատում հարձակողական գործողությունների համար ուներ 40-հազարանոց բանակ, իսկ ռուսներն այդ նպատակի համար կարող էին հանել միայն 14 հազար զորք։ Բնականաբար, հարկ կար կորպուսի ուժերը համալրել տեղական ժողովուրդներից ձևավորված աշխարհազորային ջոկատներով։

Հայերից աշխարհազորային ջոկատներ կազմակերպելու վերաբերյալ ռուսական բանակի հրամանատարության մտադրության հաստատման համար կարևոր փաստաթուղթ է գեներալ Կրասովսկու 1828 թ. հունվարի 5-ի զեկուցագիրը բանակի գլխավոր շտաբին։ «Կրասովսկին,—գրում է պրոֆ. Զ. Գրիգորյանը,—իր զեկուցագրի մեջ զարգացնում է այն միտքը, թե հայկական մարզի բնակչությունից կամավոր սկզբունքներով հնարավոր է կազմակերպել 2000 մարդուց կազմված աշխարհազոր։ Նա իր լիակատար վստահությունն է հայտնում այն մասին, որ առաջիկայում անհետաձգելիորեն հնարավոր է ձևավորել մի գունդ՝ կազմված 400 հեծյալներից և 800 հետևակայիններից»[11]։

Կրասովսկու զեկուցագրից պարզ կերպով երևում է, որ նա ցանկանում էր այդ ճանապարհով լրացնել կորպուսի սակավաթիվ ուժերը, խաղաղ ժամանակ դրանք օգտագործելով պահակային ծառայության համար, իսկ հարկ եղած դեպքում նաև ռազմաճակատներում[12]։

Ռուսական բանակի հրամանատարությունը որոշել էր Կովկասում թուրքերի դեմ օգտագործել ռուս-պարսկական պատերազմում կովկասյան ժողովուրդներից կազմակերպված ջոկատները և շարունակել նման ջոկատների կազմակերպումը։ Այդ մասին է վկայում նաև 1828 թ. փետրվարի 18-ին ռուսական բանակի գլխավոր շտաբի պետ գեներալ Դիբիչի ուղարկած հրահանգը Թիֆլիսի կեներալ-նահանգապետ Սիպյագինին։ Այդ մասին հավաստի նյութեր կան գեներալ Պասկևիչի բազմաթիվ զեկուցագրերում[13]։

Դեռ նոր էր սկսվել պատերազմը, երբ Հայաստանի տարբեր մասերում կազմակերպվեցին կամավորական հեծյալ և հետևակային ջոկատներ, որոնք ռուսական բանակի հետ միասին հանդես եկան ընդհանուր թշնամու դեմ։ «...Երբ 1828 թվին սկսեցաւ օսմանեան պատերազմը,—գրում է Ա. Երիցյանը,—Արարատեան աշխարհի հայք տուին մոտ 2000 հետևակ զորք ս ա ր բ ա դ անունով և մոտ 800 հոգուց բաղկացած հեծելագունդ, որոնք այնուհետև անբաժան էին ռուսաց յառաջ ընթացող բանակից»[14]։

Ռուսական բանակը Արևմտյան Հայաստան մտնելուց հետո ականատես եղավ հայաբնակ քաղաքների ու գյուղերի բնակիչների ջերմ վերաբերմունքին։ Հայերը ոչինչ չէին խնայում ռուսական բանակին օգնելու գործում՝ համողված

---

11 Զ. Գ ր ի գ ո ր յ ա ն, Ռուս և հայ ժողովուրդների ռազմական համագործակցությունը 19-րդ դարի սկզբին, Երևան, 1957, էջ 165։

12 Նույն տեղում, էջ 167։

13 ЦГВИА, ф. ВУА, д. 4329, 17348, 4644.

14 Ա. Ե ր ի ց յ ա ն, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մաս Ա, Թիֆլիս, 1894, էջ 453։

լինելով, թե որտեղ ոտք դնի ռուսական բանակը, այն վայրը ընդմիշտ կազատվի թուրքական լծից։

Նկատի ունենալով Կարսի ռազմա-ստրատեգիական կարևոր նշանակությունը, նրա՝ որպես «Հայաստանի պատվար» և Էրզրումի բանալի լինելու հանգամանքը, Կովկասյան կորպուսը, սկսելով ռազմական գործողությունները, առաջին պլանի վրա դրեց այդ նշանավոր ամրոցի գրավումը։ Կորպուսի գլխավոր հրամանատար գեներալ Պասկևիչը Կարսի գրավմանն առաջնակարգ նշանակություն տվեց, նկատի ունենալով, որ Կարսը համարվում էր հակառակորդի հիմնական բազան, նրա գրավումով կբացվեր հետագա ազատ գործողությունների հնարավորություն, կապահովվեին Գյումրիի սահմանները և Ախալցխան կկտրվեր Էրզրումից։ Երկրամասն աչքի էր ընկնում նաև իր բերքատվությամբ, բարենպաստ կլիմայով, բնակչության զգալի մաս կազմող հայերը հակված էին դեպի ռուսները։

Թուրքերը, քաջ գիտակցելով Կարսի նշանակությունը, ըստ ամենայնի ամրացրել էին այն, ծրագրելով այնտեղից էլ Կիոս-Մամեդ փաշայի 60 հազարանոց բանակով հարձակում սկսել Գյումրի և Երևանի ուղղություններով ու գրավել Թիֆլիսը։

Ռուսական կորպուսը 12—15 հազարանոց բանակով Ախուրյան գետն անցավ հունիսի 14-ին։ Մինչև հունիսի 23-ը կատարվեց Կարս բերդի ու նրա ամրությունների հետախուզությունը։ Այդ գործում ռուսական հրամանատարությանը զգալի ծառայություններ մատուցեցին տեղացի հայերը։ Նրանք լավ ծանոթ լինելով տեղանքին՝ ցույց էին տալիս ամրոցի ավելի թույլ պաշտպանված մասերը, տեղեկություններ հայտնում թուրքական ուժերի և նրանց շարժման մասին։ «Այստեղի քրիստոնյաները,—կարդում ենք գեներալ Պասկևիչի մի զեկուցագրում,—մեր նկատմամբ մեծ վստահությամբ են լցված»[15]։ Նման կարգի մի այլ փաստաթղթում ասված է. «Մեր հրամանատարությանը ամենամանրամասն և կարևոր տեղեկությունները հայտնում են տեղացի հայերը»[16]։

Ամրոցի հետախուզությունը ցույց տվեց, որ այն կարելի է շրջանցել միայն հարավ-արևմտյան կողմից՝ Շորոխյան բարձունքներից։ Հենց այստեղից էլ հունիսի 23-ին սկսվեց գրոհը։ Թուրքերը կատաղի դիմադրություն ցույց տվեցին։ Նրանց օգնության էր շտապում Կիոս-Մամեդ փաշան՝ իր 15 հազարանոց բանակով, որն արդեն գտնվում էր Կարսից հինգ կիլոմետրի վրա։ Թերևս այդ էլ դարձավ պատճառներից մեկը, որ ռուսական գրոհող զորամասերը շատ ուղղություններում գիմելով սվինամարտի՝ կոտրեցին հակառակորդի դիմադրությունը, մեկը մյուսի հետևից գրավեցին Կարսի վրա իշխող ամրությունները և մինչև թուրքական օգնության շտապող ուժերը կհասնեին, Կարսն արդեն գրավված էր, նրա պատերի վրա ծածանվում էր ռուսական դրոշը։

Կարսի արագ անկումը արդյունք էր ամենից առաջ Կովկասյան կորպուսի մարտունակությանը, նրա շարքերում Կովկաս աքսորված դեկաբրիստներ Ե. Լաչինովի[17], Ի. Պուշչինի, Ա. Գանկեբոլովի, Բ. Բեստուժևի և շատ ուրիշ-

---

15 ЦГВИА. ф. ВУА. д. 4644. л. 75.

16 Նույն տեղում, գ. 4646, թ. 112։

17 Ե. Լաչինովը հրամանատարության կողմից ամրացված է եղել հայկական կամավորական մի գրուժինայի, դիվորական ծառայության ուսուցման նպատակով։ (ЦГИА Арм. ССР, ф. 342, оп. 1, д. 7, л. 70 и об.).

ների գտնվելուն, ինչպես նաև անգրկովկասյան ժողովուրդների կողմից ռուսական կորպուսին ցույց տրված ակտիվ օգնության։ Քիչ նշանակություն չունեցան նաև թուրքական հրամանատարության թույլ տված սխալները։

Կարսի գրավման հերոսամարտում աչքի ընկնող դեր խաղացին հայերը։ Դեռևս պաշարման շրջանում թուրքական հրամանատարությունը, հակառակ հայերի կամքի, զինեց նրանց և հսկողություն սահմանելով՝ ստիպեց կռվել ռուսների դեմ, սակայն նա սխալվեց իր հաշիվներում, որովհետև, ինչպես գրում է Լեոն, «նրանք կամ փախչում, գնում էին ռուսական բանակ, կամ օգնում էին ռուսական զինվորներին՝ բարձրանալ բերդի պատերի գլուխ և ներս թափվել»[18]։ Այդ է հաստատում նաև Պոտտոն։ «Հայերը,—գրում է նա,—օգնում էին ռուս զինվորներին բարձրանալու պատերի վրա։ Զինվորները մեկ-մեկ թռչում էին ներքև, վազում բաց անելու դռները»։ Այդ բանը,—շարունակում է նա,—կատարվում էր այնպես արագ, զորքերի այնպիսի հիանալի մասնակցության պայմաններում, որ թուրքերը կորցրել էին գլուխները, չէին հասկանում, թե ինչ է կատարվում իրենց շուրջը»[19]։

Կարսը գրավելուց հետո տեղական հայերը կազմակերպեցին աշխարհազորային ջոկատներ, որոնք կատարում էին պահակային և այլ կարգի ծառայություններ[20]։ Սակայն դրանով չէր սահմանափակվում Կարսի հայերի օգնությունը ռուսական բանակին։ «Կարսի հայերը,—կարդում ենք մի փաստաթղթում,—այնքան ակնհայտ դրսևորեցին կողմնորոշումը դեպի ռուսական բանակը, որ կազմեցին հայկական կամավորական երկու դրուժինա՝ մեկը հեծյալ, մյուսը՝ հետևակ, որոնք մտան ռուսական գործող բանակի կազմի մեջ»[21]։

Կարսը վերցնելուց հետո, Կովկասյան կորպուսի հրամանատարությունը ձեռնարկեց Ախալցխայի փաշայության գրավումը։ Այն կարևոր էր ստրատեգիական ու տնտեսական տեսակետից։ Նրա տերիտորիայում գտնվող Ախալցխա, Ախալքալաք, Արդահան և այլ ամրությունները տեպտեմբերից հետո գրավելը կդառնար դժվարին և նույնիսկ անհնարին։ Շտապել պետք էր նաև այն պատճառով, որ հակառակորդն այնտեղ սկսել էր կուտակել նոր ուժեր, չնայած մինչ այդ միայն Ախալցխան իր արվարձանների հետ միասին ուներ 10 հազարից ավելի զորք[22]։ Ախալցխայի գրավման համար մոմենտը նպաստավոր էր նաև այն տեսակետից, որ էմին փաշան անգործունեության մատնված, նստած էր Արդահանում՝ սպասելով ռուսների հարձակմանը այդ ուղղությամբ։

Ռուսական զորամասերը հունիսի 17-ին Ախալքալաքի վրայով սկսեցին շարժվել դեպի Ախալցխա նկատի ունենալով, որ վերջինիս գրավումով կամրապնդվեին ռուսական սահմանները այդ ուղղությամբ։ Հուլիսի 23-ին գրոհով գրավվեց Ախալքալաքը, հուլիսի 26-ին՝ գնդապետ Կոմարովի զորամիավորին, որի մեջ մտնում էր նաև հայկական կամավորական մի ջոկատ, անձնատուր եղավ Խերթվիսը։

Օգոստոսի 3-ին ռուսական առաջապահ զորամասերը կանգ առան Ախալցխայի պատերի տակ։ Եղած հետախուզական տվյալները և նոր հետազոտո-

18 Տե՛ս Լեո, նշված աշխատությունը, էջ 188։
19 Потто В., Кавказская война, т. IV, ч. II, стр. 64.
20 ЦГИА Арм. ССР, ф. 342, оп. 1, д. 7, л. 9
21 ЦГВИА, ф. ВУА, д. 4644, л. 72.
22 Նույն տեղում, էջ 94—95։

թյունները ցույց տվեցին, որ ամրոցը կարելի է գրավել միայն գրոհով, սակայն ավելորդ կորուստներից խուսափելու նպատակով պահանջվեց այն կամավոր կերպով հանձնել։ Թուրքական հրամանատարությունը, մերժելով ռուսների պահանջը, տվեց գոռոզ ու հոխորտացող հետևյալ պատասխանը. «Մենք ո՛չ Երևանի և ո՛չ էլ Կարսի բնակիչներ ենք, մենք ախալցխացիներ ենք, մեզ հետ ոչ կին կա, ոչ կարողություն, մենք կմեռնենք պատերի վրա, բայց ամրոցը չենք տա։ Վաղուց մի ասացվածք կա, որ մեկ կարսեցին ծեծում է երեք երևանցու, իսկ երկու կարսեցին չարժեն մեկ ախալցխացու»[23]։

Օգոստոսի 8-ին Ախալցխայում եղած կայազորին օգնության էր հասել 10 հազարանոց մի զորամիավոր։ Նման պայմաններում ռուսական բանակի ռազմական խորհուրդը քննարկման դնելով Ախալցխայի գրավման հարցը, ընդունեց գեկաբրիստ Լաչինովի առաջարկը և որոշեց նախ ջախջախել Ախալցխային օգնության եկած թուրքական ուժերին, իսկ հետո միայն սկսել ամրոցի վրա գրոհը։ Այդ պլանի համաձայն օգոստոսի 15-ին սկսվեց ամրոցի գրոհը։ Թուրքերը կատաղի դիմադրություն էին ցույց տալիս՝ վստահ լինելով իրենց գերազանց ուժերի վրա։ Սակայն արդեն քաղաք մտած ռուսական ուժերը, դիմելով ձեռնամարտի, գրավեցին ամրոցի չորս արտաքին պատերից երեքը և ծանր կացություն ստեղծեցին թուրքական կայազորի համար։ Օգոստոսի 16-ին Կիոսմամեդ փաշան կապիտուլյացիա խնդրեց։

Ախալցխայի համար մղվող մարտերին ակտիվ մասնակցեցին նաև հայերն ու վրացիները։ Ամրոցի առաջին գրոհողների շարքում էր 70 հոգուց բաղկացած հայ կամավորների ջոկատը[24]։

Ճիշտ է, քաղաքի բնակչության մի զգալի մաս կազմող հայերին և վրացիներին թուրքերը զինելով հարկադրել էին դուրս գալ ռուսների դեմ, սակայն ոչ հայերը և ոչ էլ վրացիները ռուսական բանակի դեմ չկռվեցին, ընդհակառակը, քաղաքում և ամրոցում ծավալված մարտերի ժամանակ նրանք օգնում էին գրոհող ռուսական զորամասերին։ Ախալցխայի համար մղված մարտերին ակտիվ մասնակցություն ունեցան հայ սպաներ Երեժանյանը, Ղորղանյանը, Շամիր Մելիք-Բեգլարյանը և ուրիշներ[25]։

Քաղաքի և ամրոցի համար մղվող մարտերում հայ շարքային զինվորներից զոհվեցին 12 հոգի[26]։ «Ախալցխա և Խերթվիս բերդերի գրավման ժամանակ,—կարդում ենք մի փաստաթղթում,—մեծ ծառայություն մատուցեցին հայերը՝ կողք-կողքի կռվելով ռուս զինվորների հետ»[27]։

Օգոստոսի 22-ին գեներալ Երեխմանի զորաջոկատը, որի կազմի մեջ մտնում էր նաև հայկական մի կամավորական ջոկատ, գրավեց Արդահանը։ Փիլ օգնություն ցույց չավեցին ռուսական զորաջոկատին նաև տեղացի հայերը[28]։

Դեպի Արդահան շարժվող ռուսական զորամասերը ազատագրեցին թուրքերի կողմից տեղահանված և դեպի Էրզրում քշվող 33 հայ գյուղերի բնակիչներին։ Երբ ազատագրված հայերը մեկնում էին իրենց բնակավայրերը, թուր-

23 Տե՛ս В. Потто, Кавказская война..., т. IV, ч. II, стр. 104.
24 ЦГВИА, ф. ВУА, д. 4644, лл. 203—204.
25 Տե՛ս Երիցյան, նշված աշխատությունը, էջ 402։
26 ЦГВИА, ф. ВУА, д. 4644, л. 204.
27 Նույն տեղում, թ. 75։
28 Նույն տեղում, թ. 203—204։

րերը հանկարծակի գրոհեցին նրանց վրա, ճնշում գործադրելով հայկական զինված փոքրաթիվ ջոկատի վրա։ Այդ նկատելով՝ ռուս հետևակայինները մարտի մեջ մտան։ Նրանցից ամեն մեկը նույնիսկ պատրաստ էր իր կյանքը տալ անգեն հայերի պաշտպանության համար[29]։

Արդահանի գրավումով ավարտվեց Ախալցխայի փաշայության նվաճումը։ Այստեղ ևս Կարսի օրինակով ստեղծվեց զինվորական նահանգապետություն՝ գեներալ Վ. Բեհրութովի գլխավորությամբ։

Ախալցխայի ամբողջ փաշայության գրավման ժամանակաշրջանում ծավալված մարտական գործողություններում ակտիվ մասնակցություն են ունեցել նաև Կովկաս աքսորված դեկաբրիստները։ Մ. Պուշչինը գործուն մասնակցություն է ունեցել Ախալցխայի գրոհի կազմակերպմանը։

Ախալցխայի գրավմանը մասնակցել են նաև Ն. Սեմիչևը, Բ. Բեստուժևը, Ա. Վեգենյապինը, Բուրցևը, Վ. Վոլխովսկին[30] և ուրիշներ։

Կովկասյան կորպուսի հիմնական ուժերի հետ միասին ռազմական գործողություններ սկսեց նաև Երևանյան ջոկատը։ Նրա ուժերը սակավաթիվ էին՝ երկու հազար սվին, 340 սուր և հայ-ադրբեջանական կամավորական ուժեր։ Սակայն ջոկատի հրամանատար Ա. Ճավճավաձեն, սկսելով ռազմական գործողությունները, համոզված էր, որ կհաղթեն, որովհետև մեծ հույսեր էր կապում Բայազետի փաշայության բնակչության հիմնական մասը կազմող հայերի օգնության հետ։ Իրոք, երբ օգոստոսի 27-ին ռուսական զորամասերը կանգառան Բայազետի պատերի տակ, քաղաքի և շրջակա վայրերի հայերը ոտքի կանգնեցին։ «Դարերով ճնշված հայոց ոգին,—գրում է Ա. Երիցյանը,—կենդանացաւ ապագայ բարօրութեան յոյսով...»[31]։ Տեղացի հայերը ռուսական բանակի հրամանատարությանը ճիշտ տեղեկություններ հայտնեցին թշնամու մասին։ Երբ սկսվեց Բայազետի գրոհը, հայերը փաշային տեղյակ պահեցին, որ իրենք ուրախ են դրա համար և պատրաստ են օգնելու ռուսներին։ Այդքանը բավական եղավ, որպեսզի ռուսական հրետանու առաջին կրակոցներից հետո բացվեն ամրոցի դռները։ Քաղաքի հայերը, մեծ ոգևորությամբ ընդառաջ գնալով մոտեցող բանակին, ամրոցի բանալիները հանձնեցին հրամանատարին։ «Հայերը,—գրում է Պոտտոն,—բացարձակ կերպով պայմաններ ստեղծեցին ռուսների համար, պատրաստ էին օգնելու նրանց և իրոք տվեցին հաց ու տեղեկություններ թշնամու մասին»[32]։ Բայազետի գրավման համար մղված մարտական գործողություններին մասնակցեց նաև Երևանի հայ-ադրբեջանական աշխարհազորային ջոկատներից մեկը։

Բայազետը գրավելուց հետո, նկատի ունենալով Դիադդինի հայ բնակչության ցանկությունը, այնտեղ ուղարկվեց Սարդարաբադի հայկական հեծյալ 50 հոգուց բաղկացած և բայազետցիներից կազմված աշխարհազորը, որոնց մեծ սիրտիրությամբ դիմավորեցին տեղացի հայերը։ Շուտով Բայազետի և Դիադդինի օրինակին հետևեցին Խամուրի հայերը։ Նրանք պատգամավորություն ուղարկեցին Բայազետ՝ ամրոցի բանալիները հանձնելու համար։ Սեպտեմբերի 12-ին մի զորաջոկատ, որի մեջ մտնում էին նաև հայ կամավորներ, գրավեց Թորփաղ-գալան (պատմական Վաղարշակերտ)։

29 Նույն տեղում, թ. 103—104։

30 Մ. Ներսիսյան, Դեկաբրիստները Հայաստանում, Երևան, 1958, էջ 68։

31 Տե՛ս Ա. Երիցյան, նշված աշխատությունը, էջ 406։

32 Տե՛ս Потто В., Кавказская война., т. IV, ч. 4, стр. 28.

Այսպիսով, տեղի հայ բնակչության հետ սերտ համագործակցության շնորհիվ երևանյան ջոկատին հաջողվեց կարճ ժամանակամիջոցում տիրել Բայազետի ամբողջ փաշայությանը։ Այդ հաղթանակների գործում իր ակտիվ մասնակցությունն ունեցավ հայ ժողովուրդը, որի օգնությունը չսահմանափակվեց միայն կամավորներ տրամադրելով։ Նրանք ռուսական բանակին օգնեցին նաև բարոյապես ու նյութական միջոցներով։ Բազմաթիվ են դեպքերը, երբ հայերը կամ նվիրատվության կարգով, կամ էժան գներով ռուսական բանակին են տվել հաց, միս և զանազան տեսակի այլ մթերքներ։ Նրանք իրենց ջրաղացներում աղացել են անհրաժեշտ քանակությամբ ցորեն և այլն[33]։ «Հայկական գյուղերի գյուղացիները,—կարդում ենք մի փաստաթղթում,—սիրով հնձում են նաև թուրքերի ցանած հողերը՝ մեր բանակը հացով ապահովելու համար»[34]։ Հայերը, ոգևորված այն բանից, որ ռուսների հաղթանակն իրենց ազատություն է բերում թուրքական լծից, հնարավոր բոլոր միջոցներով օգնում էին ռուսական զորամասերին[35]։ Նրանք շատ դեպքերում դուրս էին գալիս դաշտ աշխատանքի զինված, հարկ եղած դեպքում թշնամու հարձակումները կանխելու նպատակով։ «Պարենամթերքի հարցը,—գրում է Պոտտոն,—ոչ մի կերպ ռուսներին չի դժվարացրել, Արդահանի սանջակը և Ալաշկերտի հովիտը... կարող էին կերակրել ոչ միայն այդպիսի ուժեր, այլև ավելին»[36]։ Հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ զինված հայերը հարձակվել են թուրքական գումակների վրա, բռնագրավել նրանց պաշարները, գյուղերից քշված անասունները և հանձնել ռուսական զորամասերին[37]։ Նյութական զգալի օգնություն են կազմակերպել նաև հայ միջնորդ առևտրականները, որոնք էժան գներով զանազան կենսամթերքներ են գնել և իրենց միջոցներով հասցրել հրամանատարության պահանջած վայրերը[38]։ Պատերազմի հենց սկզբից հայերը ռուսական բանակին տրամադրեցին 450 սայլ, 2250 բեռնակիր անասուն և այլ փոխադրական միջոցներ[39]։

Բերված և նման կարգի բազմաթիվ այլ փաստերն ասում են այն մասին, որ, չժխտելով ռուսական Կովկասյան կորպուսի մարտունակությունը, նրա շարքերում կռվող դեկաբրիստների խաղացած դերը, միաժամանակ չպետք է մոռանալ, որ Կովկասյան կորպուսի 1828 թ. ռազմական գործողություններում ունեցած փայլուն հաջողությունների գործում իր որոշակի բաժինն ունի անդրկովկասյան և առաջին հերթին հայ ժողովրդի՝ ռուսական զենքի հետ համագործակցությունը։

Այսպիսով, 1828 թ. ռազմական գործողությունները վերջացան ռուսների փայլուն հաղթանակով։ Գրավվեց երեք փաշայություն, 9 ամրոց, 315 հրանոթ, 195 դրոշ և այլ ռազմավար[40]։

Թուրքական բանակի հրամանատարությունը, իր անգլիական հովանավորների օգնությամբ ջանում էր 1829 թ. կամպանիայի ժամանակ ոչ միայն

---

33 ЦГВИА, ф. ВУА, д. 4644, лл. 94—95.
34 ЦГИА, Арм. ССР, ф. 342, оп. 1, д. 7, л. 57.
35 ЦГВИА, ф. ВУА, д. 4338, лл. 30—32.
36 «Утверждение русского владычества на Кавказе», т. IV, стр. 160
37 ЦГВИА, ф. ВУА, д. 4258, лл. 34—40.
38 ЦГВИА, ф. ВУА, д. 4644, лл. 40—43.
39 «Утверждение русского владычества на Кавказе», т. IV, ч. II, стр. 15
40 Նույն տեղում, էջ 159։

հետ խլել 1828 թ. կորցրածը, այլև իրագործել Անդրկովկասից ռուսներին դուրս մղելու և այն տիրելու իր վաղեմի նվաճողական ծրագիրը։

Անգլիան, Ֆրանսիան և Ավստրիան, անհանգստանալով Ռուսաստանի 1828 թ. ձեռք բերած հաջողություններից, սկսեցին ուժեղացնել իրենց օգնությունը Թուրքիային։ Անգլիացիները պրակտիկ գործունեություն ծավալեցին՝ Ռուսաստանի դեմ ստեղծելու թուրք-պարսկական դաշինք։ Հենց այդ քաղաքականության ղոհ դարձավ Թեհրանի ռուսական դեսպան Գրիբոյեդովը։ Սակայն անգլիացիները հաջողության չհասան, որովհետև ռուսական բանակի արագ հարձակումները ասիական Թուրքիայում ստիպեցին պարսկական շահին նեղումն խնդրել Ռուսաստանից՝ Գրիբոյեդովի շարանենգ սպանության համար։

Իր 1829 թ. ռազմական պլանն իրագործելու նպատակով թուրքական հրամանատարությունը 60-հազարանոց բանակ կենտրոնացրեց Էրզրումում՝ նոր սերասկյար Հաջի-Սալախ փաշայի հրամանատարությամբ, 50-հազարանոց մի բանակ առանձնացվեց Բայազետի և 60-հազարանոց մի բանակ՝ Ախալցխայի ուղղություններից հարձակում սկսելու համար։ Ընդհանուր առմամբ նախատեսվում էր կովկասյան ճակատում բանակի քանակը հասցնել մոտ 200 000 մարդու[41]։ Թուրքական հրամանատարությունը նախատեսում էր իր այդ բանակով հարձակում սկսել Ախալցխայի, Կարսի և Բայազետի ուղղություններով, դրավել դրանք և ներխուժել Անդրկովկաս։

1829 թ. կամպանիային նախապատրաստվում էր նաև Ռուսաստանը։ Կովկասյան կորպուսի ուժերը հակառակորդի համեմատությամբ սակավաթիվ էին։ Շտապ կարգով նոր ուժեր երկրի կենտրոնական մասերից չէր սպասվում։ Կորպուսի ուժերը համալրելու համար բանակի հրամանատարությունը նորից դիմեց տեղական միջոցների։

Բայազետի փաշայությունում ձևավորվեց հայկական հետևակ և հեծյալ գունդ[42]։ Կարսում զենքի ընդունակ բոլոր մարդիկ զինվեցին և մտան բերդի պաշտպանության ծառայության մեջ[43]։ Նոր կազմակերպված աշխարհազորային ջոկատներ ուղարկվեցին սահմանային ծառայության։ «Հայկական աշխարհազորը,—գրում է Կարսի մարզի կայազորի պետը՝ բարոն Սակկենին,—հաճությամբ է կատարում իր վրա դրված սահմանային պաշտպանության պարտականությունը...»[44]։

Հայերը ռուսներին ակտիվ օգնություն ցույց տվեցին 1829 թ. Ախալցխայի պաշտպանության ժամանակ, որի կազմակերպիչն էր ամրոցի կայազորի պետ գեներալ Վ. Բեհբութովը։ Երբ փետրվարի 17-ին թուրքերը մեծաքանակ ուժերով օղակեցին Ախալցխան, այնտեղ Բեհբութովի գլխավորած կայազորը, չնայած իր սակավաթիվ լինելուն, չվհատվեց և շրջակա ամբողջ քրիստոնյա բնակչությանը զինելով՝ հերոսաբար պաշտպանեց քաղաքն ու ամրոցը՝ մինչև օգնական ուժերի հասնելը[45]։ Ամրոցի պատերի տակ առաջին լուրջ դիմադրությունը թուրքերին ցույց տվեցին զինված հայերն ու հրեաները[46]։ Երբ թուրքական փա-

41 Տե՛ս «Утверждение русского владычества на Кавказе», т. IV, ч. II, стр. 163.

42 Նույն տեղում, էջ 66։

43 ЦГИА Арм. ССР, ф. 342, оп. 1, д. 7, л. 13.

44 Նույն տեղում, թ. 70։

45 Ախալցխայի պաշարման լուրը կորպուսի հրամանատարին հասավ Շորագյալի բնակիչ, կապավոր Գաբրիելի միջոցով։

46 ЦГИА Арм. ССР, ф. 342, оп. 1, д. 7, л. 20.

չան պահանջեց անձնատուր լինել, Բեհբութովը նրան պատասխանեց. «...Ռուսներն ամրոցներն այլ կերպ չեն հանձնում, քան միայն խաղաղության պայմանագրով, այն էլ մեծահոգի գտնվելով։ Ունենալով իմ հրամանատարության տակ քաջ կայազոր և ամեն ինչ ամրոցի պաշտպանության համար, ես ոչ մի այլ բան չեմ մտածում, քան համարձակ դիմադրության, որի համար ես վաղուց արդեն պատրաստ եմ»[47]։ Բեհբութովին արդեն հայտնի էր, որ Ախալցխա են շտապում օգնական ուժեր, որոնք մարտի սկզբին Բորժոմի կիրճում ջախջախեցին թուրքական Ավդի բեկի կորպուսը, որից էլ սարսափած ամրոցն օգակող Ահմեդ փաշան թողեց պաշարումը և խուճապահար փախուստի դիմեց։ Ախալցխայի պաշտպանության գործում կարևոր նշանակություն ունեցավ նաև Բեհբութովի անձնական օրինակը։ Այդ փաստը նույնիսկ նշեց փառասեր Պասկևիչը. «Ինքը, իշխան Բեհբութովը,—գրել է նա,—անձնական օրինակով ոգեվորել է բոլորին...»[48]։

Մինչդեռ Կովկասյան կորպուսը նախապատրաստվում էր գարնանային գլխավոր ռազմական գործողությունների, տեղական նշանակություն ունեցող մարտերում աչքի ընկան հայ աշխարհազորային ջոկատները։ Այսպես, օրինակ՝ 1829 թ. մայիսին Կարսի փաշայությունից բարոն Սակկենին գրված մի զեկուցագրում ասված է, որ Պաշնայի շրջանում հակառակորդի ջոկատները սպառնալիք են ստեղծում Կաղզվանի սանջակի համար, իսկ մարզի ամբողջ «...հայկական աշխարհազորը հիմա կենտրոնացված է Սողանլուղի ուղղությամբ, դիմադրելու համար թշնամու ավազակային բանդաներին»[49]։ 1829 թ. ապրիլի 8-ին Արդահանի կայազորի պետը Կարսի մարզի գեներալ-նահանգապետին հայտնում է, որ իր կողմից պետական կարևոր փաստաթղթերով Կարս ուղարկված երկու հայեր բռնվել և խոշտանգվել են[50]։ Նույն թվականի մայիսի 5-ին Պասկևիչը Սակկենին խնդրում է հայերից առանձնացնել ուժեղ հետախուզություն հակառակորդի մասին ճիշտ տեղեկություններ հավաքելու համար[51]։ Այդ նույն ժամանակաշրջանում Կարսի բոլոր դարբասների պահակությունը հանձնված էր հայերին։ Այդ մասին ամրոցի պարետի զեկուցագրում՝ ուղղված նահանգապետին, ասված է. «Բոլոր դարբասների վրա պահակներ են կարգված հայ ավագներից, որոնց վրա լրիվ կարելի է վստահել, նրանք ոչ մի ձևով թույլ չեն տա ամրոց մտնել կամ այնտեղից դուրս թողնել որևէ մարդ»[52]։ Կարսի նահանգապետի մի այլ զեկուցագրում՝ նորից ուղղված Սակկենին, հիշատակվում է Թիֆլիսի բնակիչ Արծրունին, որը որպես հետախույզ ուղարկվել է Էրզրում և բերել հավաստի տեղեկություններ թուրքական բանակի և այնտեղի ընդհանուր դրության մասին[53]։ Ռուսական հրամանատարությանը Էրզրումից կարևոր տեղեկություններ է հայտնել նաև եպիսկոպոս Անտոնիոն[54]։ Կովկասյան համարյա բոլոր սահմաններում եղել են հայկական հեծյալ պարեկներ, որոնք հիանալի կերպով կատարել են իրենց պարտականությունները»[55]։

---

47 Տե՛ս «Утверждение русского владычества на Кавказе», т. IV, ч. II, стр. 168.

48 Նույն տեղում, էջ 185—186։

49 ЦГИА Арм. ССР, ф. 342, оп. 1, д. 7, л. 74 и об.

50 Նույն տեղում, գ. 2, թ. 29 և հակ.։

51 Նույն տեղում, թ. 102։

52 Նույն տեղում, թ. 70։

53 Նույն տեղում, գ. 1, թ. 15—16։

54 ЦГИА Арм. ССР, ф. 342, оп. 1, д. 7, лл. 55—56.

55 Նույն տեղում, թ. 75։

Դեպի Էրզրում շարժվող ռուսական բանակին զրկաբաց են ընդունել հայերը։ Ինչպես գրում է Երիցյանը, երբ Պասկևիչն առաջ էր շարժվում դեպի Էրզրում, նրան խումբ-խումբ դիմավորում էին Բասենի հայ գյուղացիները։ «...իրենց ունեցած չունեցածն անկեղծ սիրով ընծա էին բերում ռուսաց զորքին»[56]։ Դեպի Էրզրում տանող ճանապարհին առաջին ճակատամարտը տեղի է ունեցել հունիսի 17-ին, որտեղ թուրքական Օսման փաշայի գլխավորած բանակը կրել է խայտառակ պարտություն։ Այնուհետև, ռուսական զորամասերը հունիսի 18-ին շարժվել են դեպի Միլլի-գյուղ, որտեղ այդ ժամանակ տեղավորված էր թուրքական գլխավոր ճամբարը։ Շարժման ճանապարհին Կանլի գյուղում ռուսները ծանր հարված են հասցրել թուրքական հեծելազորին և գերել հրամանատար Մամիշ աղային։ Հետապնդելով թուրքական ջախջախված հեծելազորին՝ ռուսական զորամասերը հասել են Զինվա, որտեղ կանգնած էր իսքը՝ սերասկյարը՝ 18 հազարանոց բանակով։ Հունիսի 19-ի առավոտյան ռուսները գրոհ են սկսել թուրքական ճամբարի վրա և ջախջախել թուրքական բանակը։ Գեներալ Պասկևիչը, այդ մասին զեկուցելով կայսրին, միաժամանակ նշել է. «Ես պարտավոր եմ չլռել գովեստի արժանի, ինձ հետ գտնվող մահմեդական գնդերի մասին։ Բոլոր մարտերում նրանք կռվում են գերազանց քաջությամբ, գրոհների ժամանակ լինում են առջևում, քաջաբար և վստահ գրոհելով նաև հակառակորդի հետևակի վրա և՛ դիրքերի, և՛ հրանոթների, և՛ գերիների մեծ մասը նրանք են վերցրել»[57]։

Հետապնդելով ջախջախված թուրքերին՝ ռուսները, համարյա առանց դիմադրության մինչև հունիսի 25-ը գրավեցին Արդոսը, Քյորփի-քեյը և Խորասանը՝ տեղական հայերի օգնության ու ջերմ ընդունելության պայմաններում։

Առանց ծանր մարտերի հանձնվեց նաև Էրզրումը, որում նորից մեծ ծառայություն մատուցեցին հայերը՝ Կարապետ եպիսկոպոսի գլխավորությամբ։ Նրա գրած մի նամակը Պասկևիչին Վ. Պոտտոն այսպես է բնորոշել. «Այդ նամակը առաջինն էր, որ բացեց Պասկևիչի համար քաղաքի ներքին պատկերը և շատ օգնեց բանակցությունների ժամանակ Նրա համառությանը»[58]. Էրզրումի անկման գործում իր ծառայություններով քիչ դեր չկատարեց բանակցությունների ժամանակ Պասկևիչի կողմից այնտեղ ուղարկված կապիտան Ղորղանյանը։ Ռուսական բանակը հունիսի 27-ին մտավ Էրզրում՝ վերցնելով 29 դրոշ, 150 հրանոթ և այլ ռազմավար։ Գերի հանձնվեց ամբողջ կայազորը՝ սերասկյարի հետ միասին[59]։

Այսպիսով, ռուսական կորպուսի համեմատաբար սակավ ուժերին հաջողվեց գրավել, Ֆ. Էնգելսի արտահայտությամբ, Անատոլիայի նախադուռ Էրզրումը։

Էրզրումի գրավումից հետո նրա նահանգի հայ բնակչությունն անմիջապես ձեռնամուխ եղավ կամավորական ջոկատներ կազմակերպելու գործին։ Մկրտիչ աղան իր միջոցներով կազմակերպեց մի հեծելագունդ։ Նրա օրինակով հարյուր հոգուց բաղկացած հեծելաջոկատ ստեղծեցին հույները։ Այդ ուժերով էլ գեներալ Պանկրատևը սկսեց հացի պաշարներ կուտակել Խնուսի շրջանում։

---

56 Տե՛ս Ա. Երիցյան, նշված աշխատությունը, էջ 418։

57 Потто В., Кавказская война, т. IV, ч. II, стр. 245.

58 «Утверждение русского владычества на Кавказе», т. IV, ч. II, стр. 206.

59 Նույն տեղում, էջ 248։

Հայերն ակտիվ մասնակցություն ունեցան հուլիսի 17-ին Խարթ գյուղում տեղի ունեցած ճակատամարտին, որը մղում էր գեներալ Բուրցևի զորաջոկատը՝ իր կազմում ունենալով նաև հեծյալ մահմեդական 2-րդ գունդը, մեկ հարյուրյակ հայկական հեծելազորով[60]։

Նույն ժամանակ ռուսական բանակները խոշոր հաջողությունների հասան նաև բալկանյան ճակատում։ Նրանք գրավեցին Ադրիանապոլը և անմիջական սպառնալիքի տակ գրին Կոստանդնուպոլիսը։ Ռուսական բանակի հաղթանակները խուճապ առաջացրին Թուրքիայում և արևմտյան պետությունների կառավարող շրջաններում։ Ավստրիան մոբիլիզացրեց իր բանակները, Անգլիան ։։ Ֆրանսիան իրենց նավերը մոտեցրին Պոլսին։ Նրանք միաժամանակ ճնշում գործադրեցին Ռուսաստանի վրա՝ ընդունելու թուրքական սուլթանի կողմից արված հաշտության առաջարկությունը։

1829 թ. սեպտեմբերի 2-ին Ադրիանապոլում ստորագրվեց հաշտության պայմանագիր, ըստ որի Ռուսաստանին անցան Անապան, Փոթին, Ախալցխան, Ախալքալաքը, իսկ Արևմտյան Հայաստանում նվաճված մյուս բոլոր տերիտորիաները վերադարձվեցին թուրքերին։

Ապարդյուն անցան արևմտահայերի հույսերը, որում իրենց ռեակցիոն դերը կատարեցին արևմտյան պետությունները։ Նրանք, ոտնահարելով հայ ժողովրդի շահերը, ջանքեր չխնայեցին առգելակելու Ռուսաստանի առաջխաղացումը դեպի Արևելք։ Նրանք, ելնելով իրենց գաղութային նպատակներից և հետապնդելով Ռուսաստանին Արևելքից և Անդրկովկասից ետ պահելու իրենց տրադիցիոն քաղաքականությունը, նպաստեցին Արևմտյան Հայաստանը Թուրքիայի տիրապետության տակ մնալու գործին, որը և դարձավ այդ հատվածի հայության հետագա ողբերգության պատճառը։

Դարեր շարունակ թուրքերից հալածված հայերը այս անգամ ավելի դաժան վրեժխնդրության պետք է ենթարկվեին, որովհետև նրանք ամբողջ պատերազմի ընթացքում համագործակցել էին ռուսական զենքին։

Ստեղծված դրությունից ելքը տասնյակ հազարավոր արևմտահայեր գտան ռուսական սահմանները գաղթելու մեջ։

Պաշտոնական տվյալներով Արևմտյան Հայաստանից գաղթեցին՝ Էրզրումի փաշայությունից՝ 7298 ընտանիք, Արդահանից՝ 67, Կարսի փաշայությունից՝ 2467, Բայազետի փաշայությունից՝ 4215, ընդամենը՝ 14047 ընտանիք կամ մոտ 100 000 մարդ[61]։ Գաղթողները բաժանվեցին երեք մեծ խմբերի և հայտնի էին էրզրումցիք, կարսեցիք և բայազետցիք անուններով։ Էրզրումցիները հիմնականում բնակվեցին Ախալցխա, Ախալքալաք քաղաքներում և նրանց շրջակայքում։ Հայ կաթոլիկների մի մասը տեղավորվեց Լոռու, Շիրակի գյուղերում և բուն Գյումրիում, Էրզրումի հայերի մի մասը՝ Ծալկայի գյուղերում, կարսեցիները՝ Գյումրիում, Արագածի լանջերում՝ Ապարան, Թալին, բայազետցիները՝ Սևանի ափերին, Դարաչիչագոսմ և մասամբ Սուրմանլուում։

1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ դրսևորված ու ծավալված ռուս և հայ զենքի համագործակցությունը ոչ պատահական երևույթ էր և ոչ էլ առանձին գործիչների սուբյեկտիվ ցանկության արդյունք։ Ամբողջ հայ ժողովուրդն այդ օրերին զգում և մտածում էր միանման։ «...Հա-

---

60 Потто В., Кавказская война, т. IV, ч. II, стр. 340.
61 ЦГВИА, ф. ВУА, д. 1019, л. 12—13.

յաստանի հայերը,—գրում է Լեոն,—վճռականորեն և բացարձակապես ցույց տվին, թե իրենք էլ ճիշտ նույն կերպ են զգում և տենչում, ինչպես իրենց եղբայրներն Անդրկովկասում։ Այս մի շատ խոր խորհուրդ էր, որ առաջին անգամ Երևան էր հանում հայոց պատմությունը... Հայոց հարցն արդեն լուծվել էր Արաքսի ափերում։ Միևնույն կերպով նա լուծում պիտի գտներ և Եփրատի, Տիգրիսի, Վանա լճի ավազաններում։ ...Թուրքահայ ժողովրդին էլ մեծափայլ եռանդով ընդգրկեց նույն ազատագրական շարժումը, որ մենք տեսանք արևելյան հայության մեջ»[62]։ Այո, հայ ժողովուրդը միատեսակ էր մտածում, ուներ միանման հոգեբանություն, թեև դաժան ճակատագիրը բաժանել էր նրա հատվածները։

1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակաշրջանում ամբողջ հայ ժողովուրդը համակրանքով էր լցված դեպի ռուսները։ Սակայն մենք հակված չենք հավասարության նշան դնելու հայ հասարակական բոլոր խավերի՝ ռուսական Կովկասյան կորպուսին ցույց տրված օգնության մեջ։ Այդ հարցում բացարձակ կեղծիք է կատարում ցարական պաշտոնական պատմագրությունը, երբ հիմնական տեղը տալով առանձին ազնվական և հոգևորական գործիչներին, համարյա թե լռության է մատնում հասարակ ժողովրդին։ Այդ տեսակետից միանգամայն իրավացի է Բաֆֆին, երբ իր «Սամվել»-ի առաջաբանում գրում է. «Մեր պատմության մեջ գրեթե մոռացված է ամբոխը։ Մեր պատմագիրները չեն նկատել, որ բացի թագավորներից և իշխաններից, բացի հոգևորականներից և զինվորներից Հայաստանում կար և ժողովուրդ...[63]։ Այդ օգնությունն ամենից առաջ ցույց տվեցին աշխատավոր գյուղացիական մասսաները։ Նրանք էին, որ շատ դեպքերում տարերայնորեն կազմակերպեցին աշխարհազորային ջոկատներ, կամավորական դրուժինաներ։ Նրանք տնտեսական և այլ կարգի բազմապիսի օգնություն էին կազմակերպում ռուսական զինված ուժերին՝ ընդդեմ թուրքական հարստահարիչների։ Չպետք է մոռանալ նաև այն, որ պատմական այդ ժամանակաշրջանում հայ ազատագրական շարժման ամենահետևողական ուժը և նրանում ամենից ավելի շահագրգռվածն աշխատավոր գյուղացիությունն էր։ Նա էր, որ ամենից շատ էր տառապում թուրքական իշխանությունների արյունոտ ճիրաններում։

Ճիշտ է, այդ պատերազմից հետո չիրականացան հայերի հույսերը, բայց ռուս և հայ զենքի համագործակցությունը խոր արմատներ գցեց և նոր ուժով պոռթկաց 1853—1856 թթ. Ղրիմի պատերազմի տարիներին, երբ հայ ժողովուրդը նորից համագործակցելով ռուսական զենքին՝ ձախողեց թուրքերի և նրանց դաշնակից անգլո-ֆրանսիական գաղութարարների՝ Անդրկովկասը զավթելու պլանները, 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, երբ այդ համագործակցության հետևանքով թուրքական տիրապետությունից ազատագրվեց Հայաստանի մի հատվածը՝ Կարսի մարզը։

---

62 «Համբավարեր», 1916, № 9։

63 Բաֆֆի, Երկեր, հ. 7, Երևան, 1963, էջ 6։

А. М. ПОГОСЯН

КАВКАЗСКИЙ ФРОНТ РУССКО-ТУРЕЦКОЙ ВОЙНЫ 1828—1829 гг. И УЧАСТИЕ АРМЯН

Резюме

Статья посвящена одному из этапов военного сотрудничества русского и армянского народов — помощи армян русской армии в военных действиях на Кавказском фронте в 1828—1829 гг.

Вопрос военного сотрудничества двух народов в русско-турецкой войне 1828—1829 гг. имеет важное значение для целостного изучения истории армянского народа. Сотрудничество армян с русской армией вытекало не из колониальной политики царизма, а из стремления армян избавиться от турецкого ига при помощи победоносного русского оружия. Это сотрудничество сыграло важную роль в обеспечении побед Отдельного Кавказского корпуса на Кавказском фронте.

Эта помощь выразилась в организации как в восточной, так и в западной частях Армении, добровольной милиции и отрядов народного ополчения, которые совместно с отрядами, созданными другими закавказскими народами, рука об руку с русскими частями воевали против общего врага, выполняя службы погранохраны, сопровождения, разведки и др. Армяне оказывали русской армии также материальную и моральную помощь.